



«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«12» 08 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Լ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-13/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության N 1/73-1/12941-15 գրությամբ ներկայացված «Վեկար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00082994) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 22.05.2015թ. N 1/73-1/12941-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Վեկար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.05.2015թ. թիվ 02/23.1/1800-15 գրության պատճենը:

2. «Վեկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.05.2015թ. ներկայացրած բողոքով «Վեկար» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից կազմակերպված «ՇՀԱՊԶԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

«Վեկար» ՍՊԸ-ն 25.06.2015թ. N 69/ԱՄ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե Ընկերությունը 07.05.2015թ. դրությամբ ունեցել է արդյոք Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ այն չկապելով հաշվանցման դիմումի հետ:

Ի պատասխան «Վեկար» ՍՊԸ-ի 25.06.2015թ. N 69/ԱՄ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 03/4-1/17317-15 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 105-Ա հրամանի 2-րդ կետի համաձայն՝ պետական գնումների մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը պատվիրատուներին կազմում և տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչությունը: Ելնելով վերոգրյալից՝ հիմք է ընդունվում ՀՀ ֆինանսների նախարարի վերը նշված հրամանով սահմանված ընթացակարգի համաձայն տրամադրված եզրակացությունը:

3. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 20.05.2015թ. թիվ 02/23.1/1800-15 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից «ամենագնաց մեքենա» ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊԶԲ-15/12 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած «Վեկար» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն էլեկտրոնային փոստով կատարված հարցմանն ի պատասխան ստացված եզրակացությամբ պարզվել է, որ «Վեկար» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 696471 (վեց հարյուր իննսունվեց հազար չորս հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

4. ՍՑ-ԳԲԽ-13/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2015թ. N 1/73-1/12941-15 գրությամբ ներկայացված «Վեկար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վեկար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.05.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով որոշել է. «Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ուղարկել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Վեկար» ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ»:

4. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 12.05.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Վեկար» ՍՊԸ-ի կողմից 2015թ. մայիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վեկար»

ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 696 471 ՀՀ դրամի չափով:

6. «Վեկար» ՍՊԸ-ն Պատվիրատուին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 2015թ. մայիսի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ տվյալ օրվա դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է 15 488 378 (տասնհինգ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար երեք հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամի չափով գերավճար:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է. «Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը և «Վեկար» ՍՊԸ-ի ներկայացրած ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության կողմից տրամադրված 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքի անհամապատասխանությունն՝ Ընթացակարգը ժամանակավոր կասեցնել և հետագա ընթացքը լուծելու համար գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը»:

8. Պատվիրատուն 15.05.2015թ. N 02/23.1/1743-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել, որ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից «ամենագնաց մեքենա» ձեռք բերելու նպատակով 22.04.2015թ. կազմակերպված Ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակից «Վեկար» ՍՊԸ-ի կողմից 2015թ. մայիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը տրամադրել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ **ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 696 471 ՀՀ դրամի չափով:** Մինչդեռ, Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության կողմից տրամադրված 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

9. Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Նախարարությունը 19.05.2015թ. թիվ ՖՆ/1766-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ **պետք է հիմք ընդունել ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրված եզրակացությունը:**

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.05.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1-ին կետով որոշել է. «Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը (ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասով)՝ «Վեկար» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

11. Վեկար» ՍՊԸ-ն 22.05.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով և պահանջել է չեղյալ համարել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից կազմակերպված «ՇՀԱՊԶԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2015թ. թիվ 5 արձանագրությունը և նշված գնման ընթացակարգի արդյունքում որպես հաղթող ճանաչել «Վեկար» ՍՊԸ-ին:

12. Հաշվի առնելով «Վեկար» ՍՊԸ-ի 22.05.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը, ինչպես նաև նույն բողոքով ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրված եզրակացության և Մաշտոցի հարկային տեսչության 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքի միջև առկա հակասությունը՝ Կենտրոնը 03.06.2015թ. N 01/04.1/1208-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե Ընկերությունը 07.05.2015թ. դրությամբ ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

13. Ի պատասխան Կենտրոնի 03.06.2015թ. N 01/04.1/1208-15 գրության՝ Նախարարությունը 08.06.2015թ. N 03/4-1/14538-15 գրությամբ հայտնել է, որ ի պատասխան Պատվիրատուի 12.05.2015թ. հարցմանը՝ ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրվել է եզրակացություն, որով Մաշտոցի ՀՏ-ում հաշվառված «Վեկար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 696 471 ՀՀ դրամ: ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ի կողմից «Վեկար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00082994) տեղեկանք տրամադրելու վերաբերյալ ներկայացված պարզաբանման համաձայն՝ Ընկերությունը **14.05.2015թ. դիմել է հարկային տեսչություն նվազագույն շահութահարկի (պայմանական գերավճարից) վճարումներից առաջացած գերավճարը շահութահարկի ապառքը մարելու համար:** Միևնույն ժամանակ 15.05.2015թ. Մաշտոցի հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման կենտրոն է ներկայացվել դիմում՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԳՆ «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն» տեղեկանք ներկայացնելու համար: ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ի կողմից 15.05.2015թ. տնտեսվարող սուբյեկտին տրամադրվել է տեղեկանք՝ **հաշվի առնելով հարկ վճարողի դիմումի համաձայն իրականացված հաշվանցումը:**

14. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 10.06.2015թ. կայացրած որոշմամբ մերժել է «Վեկար» ՍՊԸ-ի 22.05.2015թ. ներկայացրած բողոքը:

15. «Վեկար» ՍՊԸ-ն 25.06.2015թ. N 69/ԱՄ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով վերանայել Կենտրոնի 03.06.2015թ. N 01/04.1/1208-15 գրությանն ի պատասխան՝ Նախարարության 08.06.2015թ. N 03/4-1/14538-15 գրությամբ հայտնած դիրքորոշումը և հայտնել, թե Ընկերությունը 07.05.2015թ. դրությամբ ունեցել է արդյոք Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ այն չկապելով հաշվանցման դիմումի հետ:

16. Ի պատասխան «Վեկար» ՍՊԸ-ի 25.06.2015թ. N 69/ԱՄ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 03/4-1/17317-15 գրությամբ հայտնել է, որ Կարգի 48-րդ

կետի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 105-Ա հրամանի 2-րդ կետի համաձայն՝ պետական գնումների մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը պատվիրատուներին կազմում և տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչությունը: Ելնելով վերոգրյալից՝ հիմք է ընդունվում ՀՀ ֆինանսների նախարարի վերը նշված հրամանով սահմանված ընթացակարգի համաձայն տրամադրված եզրակացությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-13/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության N 1/73-1/12941-15 և 03/4-1/17317-15 գրությունները, «Վեկար» ՍՊԸ-ի 22.05.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը և բողոքին կից ներկայացված փաստաթղթերը, «Վեկար» ՍՊԸ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.06.2015թ. N 69/ԱՄ գրությունը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 20.05.2015թ. թիվ 02/23.1/1800-15 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, «Վեկար» ՍՊԸ-ն 07.05.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 696471 ՀՀ դրամի չափով, ինչի պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի մասնակցելու գնումների ընթացակարգերին:

Մինչդեռ «Վեկար» ՍՊԸ-ն «ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.05.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2015թ. N 1/73-1/12941-15 գրությամբ «Վեկար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00082994) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝

Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ՝



Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-13/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Հովակիմյան